

**ԳՆԱՆՊԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴՈՒՄՆԱԿՆԵՐ**

**Խմբագրության կողմից**

Ռ. Հ. Մանուկյանի և Լ. Վ. Շահումյանի ներքո նրապարակվող հոդվածներով «ՀՍՍՌ ԳԻՏ Տեղեկագրի» (տեխնիկական գիտությունների սերիա) խմբագրությունը սկսում է Գիտությունների ակադեմիայի ԽՀԽ-ի կողմից նրատարակված «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» քննարկումը:

Խմբագրությունը խնդրում է մասնագետներին մասնակցել բառարանի քննարկմանը: Հայերեն տեխնիկական տերմինոլոգիայի հարցերին նվիրվող մաքրի փոխանակությունը անց է կացվում քննարկման նյութերը «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» երկրորդ նրատարակության ժամանակ օգտագործելու նպատակով:

Ռ. Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ**

Քե՛ս հայերը վաղուց արդեն ունեն գարդացման բարձր աստիճանի հասած գիր ու գրականություն, բայց նախասովխական շրջանում մեր լեզուն, Հայաստանի հետամնաց անասական պալմանների հետևանքով այնքան ազատ էր տեխնիկական տերմիններով, որ խոսք անդամ չէր կարող լինել պոլիտեխնիկական բառարան ունենալու մասին: Բայց սեպտյուցիայից հետո ընկած 37 տարիների ընթացքում Հայաստանի գիտություն և տեխնիկայի աննախընթաց վերելքի հետևանքով մեր օրերում արդյախի բառարան ունենալու պահանջը դարձել է անհետաձգելի: Բառարանը անհրաժեշտ է ամենուրեք՝ բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատություններում, տեխնիկական գրականության թարգմանություն ու օգտագործման համար, գործարաններում և շինարարական հիմնարկներում, մամուլում և հայ լեզվի կուլտուրան բարձրացնելու համար: Բառարանը պետք է դառնա հայ տեխնիկական լեզվի կազմակերպիչը:

Այս նպատակով է հրատարակված «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը»<sup>2</sup>: Բառարանը կազմելու աշխատանքներին մասնակցել է մեր Ռեսպուբլիկայի աչքի ընկնող գիտական աշխատակիցների և շինարար մասնագետների մի բազմանդամ կոլեկտիվ: Բառարանի լույս տեսնելը բացառիկ կարևորություն կրելով է մեր լեզվի հետագա զարգացման համար:

Սակայն բառարանում կան մի շարք թերություններ, որոնց մասին պետք է ստանձին խոսել:

<sup>2</sup> «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան», ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1957:

Այսպես, օրինակ, թարգմանելով *АНЛИЗ* բառը, բառարան կազմողները ֆիզիկամաթեմատիկական տերմինների մեջ այն դրում են վերլուծություն, իսկ քիմիական տերմինների մեջ՝ անալիզ: Հարց է առաջանում, մի՞թե քիմիական անալիզը վերլուծությունն է: Վերլուծությունն բառը, որը հավասար չափով ճիշտ է և քիմիական և մաթեմատիկական տերմինների մեջ, պետք է լինի *АНЛИЗ* բառի միակ թարգմանությունը:

Նույն ձևով պետք է հրաժարվել *ФОРМУЛА* բառի ֆորմուլա թարգմանությունից, թողնելով միայն բանաձև թարգմանությունը, որը ճիշտ է և կիրառելի բոլոր դեպքերում:

Ղեկավարվելով ՍՍՌՄ ԳԱ Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած այն սկզբունքով, որ յուրաքանչյուր տերմին պետք է արտահայտի միայն մի առարկա կամ հասկացողություն, բառարան կազմողները բոլոր տեխնիկական գիտցիայիների անվանումների մեջ հրաժարվել են *теория* բառի տեսություն թարգմանությունից (առաձգականության թեորիա, կառուցվածքների թեորիա և այլն), սակայն պատահամբ տեսական մեխանիկան չի դարձել թեորետիկական: Պետք է հաշվի առնել, որ Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքը կարող է վերաբերել միայն նեղ մասնագիտական տերմիններին:

Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքները պետք է կիրառել շատ մեծ զգուշությամբ: Բառը և հասկացողությունը երբեք չի կարելի նույնացնել: Ինչպես հայանի է, յուրաքանչյուր բառ ընդհանրացնում է մի քանի հասկացողություններ: Բայց ընդհանրացման չափը տարբեր է տարբեր բառերի համար և փոփոխվում է լեզվի ու մտքի զարգացման տարբեր շրջաններում: Ինչքան տվյալ բառը է կանգնած մարդը, որքան ավելի զարգացած է նրա միտքը, այնքան ավելի մեծ են միևնույն բառի միջոցով տարբեր հասկացողություններ ընդհանրացնելու նրա հնարավորությունները: Այսպիսով, Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքների անզգուշ կիրառումը որոշ դեպքերում ոչ թե կհարստացնի մեր լեզուն, ինչպես կարող են մտածել որոշ մասնագետներ, այլ ընդհակառակը, այն կիջցնի դեպի զարգացման ավելի ցածր աստիճանը:

Ինչպատի առնելով վերն տալածը, մենք համարում ենք, որ տեսություն բառը պետք է մնա հայերեն լեզվում իր նախկին իմաստով, թեև այն սուսերեն թարգմանվում է *теория* և *обзор* բառերով: Ղեկավարվելով Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքներով, հարկ կլինեք փոխել սուսերեն համարյա բոլոր բառերը, որովհետև հայերեն թարգմանելիս նրանք դեպքերի մեծամասնության համար արտահայտում են մեկից ավելի միտք (օրինակ՝ *область* բառը թարգմանվում է բնագավառ, մարզ, ավրույք, ձառոկ բառեր՝ փակեր, կողպեք, միացք, փական և այլն):

Составной տերմինը балка составная արտահայտությունն մեջ թարգմանված է բաղադրյալ հեծան, իսկ вал составной արտահայտության մեջ՝ կազմովի լիսն: Թեև և՛ բաղադրյալ և՛ կազմովի տերմինները հավասար չափով ճիշտ են составной բառը թարգմանելու համար, բայց կազմովի բառը ավելի շատ է օգտագործվում, աստի և այն պետք է թողնել որպես составной բառի միակ թարգմանություն:

Продёт տերմինը թարգմանելիս մինչև այժմ կիրառվող և լայն տարածում ստացած բռիչք բառը համարվել է սխալ և փոխարինվել է հեծամեջ,

աչք, լայնուրյուն, լինք, բացվածք, կանգամնջ բառերով: Հենց միայն այն հանգամանքը, որ մեկ քաղիչք տեղմինի փոխարեն բառարան կազմողները մոտցրել են վեց նոր տեղմին, արդեն խոսում է քաղիչք տեղմինի օգտին: Մենք չենք կարող համաձայնվել *пролет* բառի համար բառարանում արված աչք և բացվածք թարգմանությունների հետ: Այս թարգմանությունները ավելի ճիշտ են համապատասխանում *отверстие* բառին և արված են քննարկող բառարանում: Չպետք է անտեսել և այն հանգամանքը, որ արդեն երեսուն տարի է, որ քաղիչք տեղմինը օգտագործվում է մեր տեխնիկական գրականության մեջ և հավանության է գտել առանց բացատրության բոլոր շինարար մասնագետների մոտ: Բառարան կազմողների գրությունն ավելի մխիթարական կլինենք, եթե մի այլ տեղ, *вылет стрелы крана* արտահայտությունը թարգմանելիս նրանք ստիպված չլինեն դիմել նույն քաղիչք տեղմինին, այդ արտահայտությունը թարգմանելով՝ ամբարձիչի սլաքի արաքաղիչը:

*Концентрация* բառի թարգմանություն համար արված է կենարանացում և կոնցենարացիա բառերը, սակայն մի այլ տեղ *атомная концентрация* բառը արտահայտությունը թարգմանված է միանալվածքի առումային խառնուրդ: Այն հանգամանքի հետևանքով, որ առանձին բառերի և արտահայտությունների թարգմանությունները արված են մասնագետների տարբեր խմբերի կողմից, բնականաբար հնարավոր էր միևնույն բառի տարբեր թարգմանություններ առրելի խմբերի աված թարգմանությունների մեջ: Բառարան մշակողների և խմբագրողների պարտականությունների մեջ էր մտնում ստեղծել տարբեր արտահայտությունների մեջ միևնույն տեղմինի թարգմանությունների միատեսակություն: Ճիշտ է, այս ուղղությամբ նրանց կողմից որոշ աշխատանք կատարված է, բայց, իհարկե, նրանց կատարած աշխատանքը դեռ հետ է կատարելությունից:

*Кессон* տեղմինը թարգմանված է հայերեն սուզարկղ տեղմինի միջոցով, բայց *кессонная болезнь* արտահայտությունը թարգմանված է կենսալին հիվանդություն: Հարց է առաջանում, եթե բառարանի հեղինակները սուզարկղ տեղմինը համարում են ճիշտ, ապա ինչո՞ւ այն բոլոր դեպքերում չեն կիրառում:

Նույնը կարելի է ասել և *компрессор* բառի թարգմանության մասին: Այդ բառի համար բառարանում արված է մեզակ թարգմանությունը, սակայն *компрессорный дизель* արտահայտությունը թարգմանված է կոմպրեսորային դիզել:

*Нагель* բառի համար արված է բավականին անհաջող փայտամեխ թարգմանությունը: Փայտե մեխը, ինչպես և ամեն մի մեխ, իհարկե *нагель* է, բայց *нагель*-ը միայն փայտամեխ չէ: Օրինակ, բառարան կազմողները փայտամեխ տեղմինի օգնությամբ ինչպես կթարգմանեն *стальной цилиндрический нагель* արտահայտությունը: Մի այլ տեղ, *пластинчатый нагель* արտահայտությունը թարգմանված է քիթեղնարկվել: Այսպիսով, *нагель* բառի համար այտուղ արդեն արված է բավել թարգմանությունը: *Контробашня кабельного крана* արտահայտությունը թարգմանված է կարելային ամբարձիչի հակաշարակ, իսկ *кабельный кран* արտահայտությունը՝ կարելավոր ամբարձիչ: Հարց է առաջանում, երկու տեղմիններից որն է ավելի ճիշտ, կարելավոր ամբարձիչը, թե՛ կարելային ամբարձիչը:

*Балка жесткости* արտահայտությունը թարգմանված է կոշտարար հեծան.

իսկ ферма жёсткости արտահայտությունը՝ կոշտությամբ ֆերմա: Ավելի ճիշտ է երկրորդ թարգմանությունը:

Ферма арочная сквозная արտահայտությունը թարգմանված է բա-  
փանց կամարային ֆերմա, իսկ мост со сквозными фермами արտահայտու-  
թյունը՝ վանդակավոր ֆերմաներով կամուրջ: Ըստ երևույթին բառարանից օգ-  
տրվողներին է թողնված որոշել սկզբնական արտահայտության ճիշտ  
թարգմանությունը:

Вода грунтовая и вода почвенная երկու արտահայտություններն էլ  
թարգմանված են հալերեն գեանաշուր տերմինի միջոցով, բայց մի այլ սեղ  
инфильтрация грунтовых вод արտահայտությունը թարգմանված է սառ-  
եկերից ջրերի ներծծում: Միգուցե ավելի ճիշտ կլինեի грунтовые воды  
արտահայտությունը թարգմանել սառեկերից ջրեր, իսկ գեանաշուր տերմինը  
թողնել սրբես սочвенная вода արտահայտության թարգմանություն:

Площадка տերմինը բառարանում ամենուրեք թարգմանված է հար-  
թակ, որը և հանդիսանում է այդ բառի ընդունված ու ճիշտ թարգմանությունը,  
սակայն нормаль к площадке, внешняя արտահայտությունը թարգման-  
ված է՝ մակերեսիկի արտաքին նորմալ: Площадка բառի մակերեսիկ  
թարգմանությունը միանգամայն սխալ է:

Բայց սրանով չեն սահմանափակվում բառարանի լեզուսիրտները: Լե-  
զուն ստեղծվում է ժողովրդի կողմից ավելի կամ պակաս երկար ժամանակա-  
միջոցում: Դրա համար էլ պետք է կարողանալ ճիշտ օգտագործել ստեղծված  
բավականին հարուստ հարկական տեխնիկական տերմինոլոգիան: Սակայն բա-  
ռարան կազմողները մի քանի ղեկավարում խախտել են այդ սկզբունքը:

Օրինակ, неразрезная բառը՝ неразрезная балка, неразрезная ферма  
և այլ արտահայտությունների մեջ մինչև բառարանի լայն տեսնելը թարգման-  
վում էր շխոյված: Բառարան կազմողները որոշել են փոխել неразрезная  
բառի այս ճիշտ թարգմանությունը և այն դարձրել են անլոգովի:

Полупогайная заклёпка արտահայտությունը մինչև այժմ թարգման-  
վում էր կիսաքարնված զամ, բառարանում այն փոխարինված է կիսաքար-  
նովի զամ արտահայտությամբ, որը սխալ է: Ճիշտ նույնպես головка, по-  
тайная արտահայտության ճիշտ քարնված զիխիկ թարգմանությունը փոխա-  
րինված է քարնազիխիկ անհաջող թարգմանությամբ:

Утилизация բառը թարգմանելիս բառարանի ճեղքնակները անհաս-  
կանալի պատճառներով հրաժարվել են մինչև այժմ ընդունված օգտագործում  
թարգմանությունից և սահմանափակվել են այդ բառը հալերեն տառերով գրե-  
լով ու ախիկացիա:

Жаростойкий բառը թարգմանելիս ճեղքնակները հրաժարվել են  
գրավոր և բանավոր խոսքում մինչև այժմ կիրառվող ճիշտ չեքանակայուն  
թարգմանությունից և այն փոխարինել են սխալ կրակակայուն թարգմանու-  
թյամբ:

Нагрузка բառը թարգմանելիս, ըստ երևույթին ղեկավարվելով կզած  
բոլոր տերմինները փոխելու ձգտումով, բառարանից հանված է մինչև այժմ  
կիրառվող բն թարգմանությունը և այն փոխարինված է բնունվածք թարգ-  
մանությամբ: Մենք չենք միտում, որ որոշ ղեկավարում բնունվածք բառն էլ  
կարող է հանդիսանալ нагрузка բառի թարգմանություն, բայց ղեկավարի մե-  
ծամասնություն համար ավելի ճիշտ է բն թարգմանությունը:

Բառարան կազմողները հրաժարվել են ледокол բառի մինչև այժմ կիրառվող սառցահատ թարգմանությունից և այն փոխարինել են սառցաքեղ թարգմանությամբ: Երկարրևոտն բառը մինչև այժմ գրվում և արտասանվում է առանց ա հոգակապի: Երկաթբետոնը նրանք փոխարինել են երկարարևոտնով, իսկ железобетонное перекрытие արտահայտությունը թարգմանել են երկարարևոտն ծածկ:

Հրաժարվելով СПЛАВ բառի մինչև այժմ կիրառվող համաձուլվածք թարգմանությունից, որը նշանակում է համասեղ ձուլված, հեղինակները գրափոխարին առաջարկել են միաճալվածք թարգմանությունը: Ըստ երևույթին նրանք հաշվի են առել այն հանգամանքը, որ համաձուլվածք ստանալու համար երկու կամ մի քանի մետաղներ իրար հետ պետք է հալել, բայց համաձուլվածք կոտացվի միայն այն դեպքում, եթե իրար հետ հարված նյութերը միաձուլվեն: Մեր կարծիքով չպետք է հրաժարվել համաձուլվածք տերմինից և այն փոխարինել երևույթի էությունն ավելի վառ արտահայտող միաճալվածք բառով:

Բառարանի հեղինակները հրաժարվել են նաև մինչև այժմ օգտագործվող և օրենքի ուժ ստացած նորմալ լարում և նորմալ արագացում տերմիններից և դրանք փոխարինել են նորմալային լարում և նորմալային արագացում արտահայտություններով: Normal-(e) բառը լատինական (ֆրանսիական) սծական է, որը ստացվում է la norme գոյականից al(-e) վերջածանցի օգնությամբ: Մարդկանց և երևույթների վերագրելիս այն բառարանում էլ հանդես է գալիս որպես սծական: Օտար լեզվից վերցնել սծականը և նրա վրա ավելացնել հայերեն լեզվի սծականների վերջավորությունը, երբ այդ բառի վերջավորությունն արդեն համընկնում է հայկական սծականների վերջավորությունների հետ, գտրվ է արամարանական հիմքից: Եթե բառարանի հեղինակները հետևողական լինեին, ապա նրանք պետք է փոխեին նաև դիֆերենցիալ հաշիվ տերմինը և այն դարձնեին դիֆերենցիալային հաշիվ:

Նման ձևով են վարվել բառարանի հեղինակները երկարացում (удлинение) և կարճացում (укорочение) տերմինների հետ հարաբերական երկարացում (относительное удлинение), հարաբերական կարճացում (относительное укорочение) և նման արտահայտությունների մեջ: Նրանք այդ երկու տերմինները փոխարինել են երկարում և կարճում բառերով, որը մեր կարծիքով սխալ է:

Остаточный член տերմինի մնացորդ անգամ թարգմանությունն ավելի անհաշտ է, քան օգտագործվող մնացորդային անգամ թարգմանությունը:

Хрупкий բառի համար բառարանում արված են բեկուճ, սարք բառերը, բոլորովին մոռացված տալով այդ բառի հիմնական փխրուճ թարգմանությունը:

Передачик բառի թարգմանության համար բառարանի կազմողները հրաժարվել են մինչև այժմ կիրառվող հաղորդիչ բառից և այն փոխարինել են հաղորդակ բառով: Ըստ երևույթին այդ արված է проводник բառի թարգմանության հետ շփոթելու համար: Իհարկե, պետեղ էլ, ինչպես մնացած բոլոր դեպքերում, դարձյալ անաշտորություն հասանքով телевизионный передчик արտահայտությունը թարգմանելիս, նորից օգտագործված է հաղորդիչ բառը: Մեր կարծիքով բառարանի կազմողներն ավելի նիշտ կլարվեին, եթե տերմիններն ընտրելիս ոչ թե աշխատեին հորինել գրանք բառերի մեջ

մեկ կամ երկու տաս փոխելով, այլ օգտագործելին հալ կենդանի լեղուն: Օրինակ, передатчик բառի թարգմանություն համար կարելի էր վերցնել հանրեն ասարիչ բառը: Բառարանում չի տրված скальвующее напряжение տերմինի թարգմանությունը, այն փոխարինված է сдвигающее на пряженне տերմինի թարգմանությամբ՝ սահքի լարում:

Շինարարական մեխանիկային վերաբերող տերմիններում ավելի ճիշտ է сечение բառը թարգմանել կտրվածք, այլ ոչ թե հատվածք, իսկ метод сечений արտահայտությունը՝ կտրումների մեթոդ: Այդպիսով, մեր կարծիքով сечение բառի համար պետք է տալ երկու թարգմանություն՝ կտրվածք և հատվածք, որոնցից երկրորդ թարգմանությունը վերաբերում է զծագրական երկրաչափությունը: Անհաշոց է նաև арматура բառի ամրան թարգմանությունը, Մեր կարծիքով այդ բառի թարգմանության համար պետք է թողնել օգտագործվող արվասուրյա տերմինը, իսկ армировка բառը պետք է թարգմանել երկաթավորում: Վառ է և сварка բառի եւթ թարգմանությունը: Մասնազանների մեծ մասը сварка բառը թարգմանում է զոդում, թեև այդ տերմինը միաժամանակ հանդիսանում է և паяние բառի թարգմանությունը: Մեր կարծիքով консоль բառի համար պետք է թողնել կոնսոլ թարգմանությունը, բարձակ բառը թողնելով որպես кронштейн բառի թարգմանություն: Անհաշոց է և висячий мост տերմինի կախ կամուրջ թարգմանությունը: Опора на катках արտահայտության համար ավելի հարմար կլիներ տալ քավալուկավոր հենարան թարգմանությունը, բառարանում բերված գլանվակավոր, հենարան թարգմանության փոխարին: Սխալ է подка բառի համար բառարանում տրված նիստ թարգմանությունը, ըստ երևույթին բառարան կազմողներին հայտնի չի եղել այդ բառի համար ամենաչն հաճախակալնությունը՝ Վ. Հակոբջանյանին պատկանող կողերես թարգմանությունը, եթե այդ նրանց հայտնի լիներ, նրանք ստիպված չէին լինի равнобокий բառի ճիշտ հավասարակող թարգմանությունը փոխարինել միանդամայն սխալ հավասարանիստ թարգմանությամբ:

Մեր կարծիքով տեխնիկական տերմիններում պետք է հրաժարվել возмущение բառի հուզում թարգմանությունից և թողնել միայն զրգռում թարգմանությունը: Անհաշոց է նաև обмер բառի չափում թարգմանությունը, այն ավելի ճիշտ կլիներ փոխարինել չափագրում բառով: Անհասկանալի պատճառներով скэчок բառի թարգմանությունների մեջ բացակայում է ուսյուն բառը:

Իհարկե, գրված բառերի ցուցակը կարելի է շարունակել, բայց մեր կարծիքով բերված բառերն էլ արդեն հնարավորություն են տալիս որոշ եզրակացություն գալ:

Մենք կցանկանալինք կանց ասնել բառարանի մի այլ ատանձնահատկության վրա: Բառարան կազմողները կատարելություն են հասել հայերեն լեզվին խորթ բարդ բառեր կազմելու մեջ: Նրանց կազմած բարդ բառերում բառի իմաստը կամ բաղադրվին կորչում է, կամ փոխարինվում է իրական մտքի հետ կապ չունեցող կամ նրան հակասակ մի նոր մտքով: Այսպես, օրինակ кратная точка արտահայտությունը թարգմանելիս, փոխանակ բախարարվելու բազմապատիկ կետ պարզ և ճիշտ թարգմանությամբ, բառարանի հեղինակները ստեղծում են ոչինչ չարտահայտող նոր բարդ տերմին՝ պատիկակետ:

Ինչպես հայտնի է, արմատը բառի անփոփոխ մասն է: Բայց ըստ երևույ-

թին բարձր կողմից ընդունված այս դրույթը բառարան կազմողները համարել են սխալ: Այդ պատճառով նրանք ускоритель, ускоритель, успокоитель բառերի մինչև այժմ կիրառվող ուժեղացուցիչ, արագացուցիչ, հանգստացուցիչ թարգմանությունները փոխարինել են ուժեղարար, արագարար, հանգստարար սխալ թարգմանություններով: Անկախարկելով բառարան մշակողների սկզբունքներով մենք ստիպված կլինենք ուսուցիչ բառ փոխարինել ուսարարով, ներկայացուցիչ բառը ներկարարով, և այլն:

Нецентральный механизм արտահայտությունը թարգմանելիս հեղինակներին չի բավարարել ոչ կենտրոնական մեխանիզմ պարզ թարգմանությունը, նրանք ավելի հարմար են գտել այն փոխարինել միանգամայն սխալ արտասանեցր մեխանիզմ թարգմանությամբ:

Центрально-сжатый элемент արտահայտությունը թարգմանելիս, հեղինակները նորից են որոշել տալ ինքնօրինակ թարգմանություն. հրաժարվելով կենտրոնական սեղմված տարր ճիշտ թարգմանությունից, նրանք այն փոխարինել են կենտրոնացնողված տարր արտահայտությամբ, որն արդեն չի արտահայտում երևույթի էությունը:

Обеззараживание воды արտահայտությունը թարգմանելիս ճիշտ և ընդունված ջրի վարակազերծում թարգմանության փոխարեն հեղինակները տալիս են մեր կարծիքով սխալ ջրի ապավարակում թարգմանությունը: Նույնը կարելի է տեսլ նաև обратный раскол-ի մասին, այն բարբառնաբան էլ չի նշանակում հակաշեղմույթ:

Միայն է նաև заклёпка двухрезная արտահայտության երկկարվածք գամ թարգմանությունը: Եթե գամը կարող է երկու անդից կարվել, դա զեռ չի նշանակում, որ գամը երկու կարվածք ունի: Յուրաքանչյուր գամ ունի անվերջ թվով կարվածքներ:

Ինչ եզրակացություն կարելի է դալ, օրինակ, կարգալով дерновка лентами в клетку արտահայտության վանդակաձև ժապավեններով նմում թարգմանությունը: Մեզ թվում է, որ հեղինակներին հարմար է, որ վանդակաձև ժապավեններ չեն լինում:

Միանգամայն պարզ է, որ равномерное относительное сужение նշանակում է հավասարաչափ հարարերական նեղացում, այլ ոչ թե հարարերական հավասարաչափ նեղացում, ինչպես տրված է բառարանում: Пролётное строение, балочное արտահայտությունը թարգմանվում է նեծանային թռիչքային կառուցվածք, այլ ոչ թե նեծանեջային նեծանային կառուցվածք: Ճիշտ նույնպես пролётное строение, рамное արտահայտությունը պետք է թարգմանվի շրջանակային թռիչքային կառուցվածք, այլ ոչ թե նեծանեջային շրջանակավոր կառուցվածք, և այլն:

Փոքր ինչ ավելի բարեխիղճ վերաբերմունքի դեպքում легированный чугун արտահայտությունը կարելի էր թարգմանել ավելի ճիշտ, քան բառարանում տրված լեգիրված պողպատ թարգմանությունը: Նույնը կարելի է տեսլ և перепад температуры արտահայտության համար տրված ջերմության անհավասար տրված գազային ցեմենտում թարգմանություն մասին: Նույնը կարելի է տեսլ նաև подшипник качения радиально-упорный արտահայտության գլորման շարժա-նեծակային առանցքակալ (պետք է լինի գլորման շտապ-գա-հեծակային առանցքակալ), ինչպես նաև ферма консольно-балочная ար-

տանաչառության բարձրագույն աստիճաններին ֆերմա (պեւք է լինի բարձրագույն աստիճանին ֆերմա) թարգմանությունների մասին:

Անաչառության պատճառով է բառարանում տեղ գտել նաև напряже-  
ние сдвигающее արտահայտության սահող լարում միանգամայն սխալ թարգ-  
մանությունը, ինչպես նաև сварка прерывная արտահայտության անընդհատ  
կարանով եւք արամագծողին հակադիր թարգմանությունը, և այլն:

Վերջապես բառարանում շատ կան նկատված ու չնկատված վրիպակներ:

Հաշիի առնելով բառարանի կարեւորագույն դերը, անհրաժեշտ է անհա-  
պաղ ստեղծել անխնիկական տերմինոլոգիայի՝ մշտապես զործող նոր հանձ-  
նաժողով, որը, հիմք ընդունելով ներկա բառարանը, կարողանա ստեղծել  
զործնական օգտագործման համար պիտանի բառարան: Նախքան նոր բառա-  
րանի հրատարակությունը, այն պեւք է հանձնել տարբեր մասնագետների,  
խոյ ազիլի լով է՝ բունների ամբիոնների և անխնիկական գիտահետազոտական:  
ինստիտուտների քննարկմանը:

Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ

Ստացված է 23 XI 1957